Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ `<< ՀՀ Արարատի մարզի Արտաշատ քաղաքի Հ. Ճգնավորյանի անվան հ 5 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ –ի ռուսաց լեզվի /12դասաժամ/ ուսուցչի պաշտոնի թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

9. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է /Ձև 1/:
10. Փաստաթուղթ/դիպլոմ/ ՝ <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
11. Անձնագրի պատճենը,
12. Ինքնակենսագրություն/ Ձև 4/,
13. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները /դրանց առկայության դեպքում/,
14. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
15. Այլ պետությունների քաղաքացիությունը ՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք.
16. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև փետրվարի 19-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա փետրվարի 21-ին՝ ժամը 15:00-ին, Արարատի մարզի Արտաշատ քաղաքի Հ. Ճգնավորյանի անվան հ 5 հիմնական դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093)45-08-08 հեռախոսահամարով: